



Հետաքրքրության հայտերի ներկայացման հրավեր (ՀՀՆՀ)

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԱՐԱՆ

Փոխառություն No. 3293 – ARM: Քաղաքային կայուն զարգացման ներդրումային ծրագիր – Տրանշ 2

Դավթաշեն-Աշտարակ և Բաբաջանյան-Աշտարակ ճանապարհահատվածների շինարարության վերահսկողության

Որակի և արժեքի վրա հիմնված ընտրություն (QCBS)

Ամսաթիվ 5 մայիսի, 2016 թ.
 Փոխառություն No L3293-ARM: Քաղաքային կայուն զարգացման ներդրումային ծրագիր – Տրանշ 2
 Պայմանագրի համար և վերնագիր QCBS-CS-10: Դավթաշեն-Աշտարակ և Բաբաջանյան-Աշտարակ ճանապարհահատվածների շինարարության վերահսկողության ՀՀՆՀ
 ներկայացնելու վերջնաժամկետ 6 հունիսի, 2016թ.

1. Հայաստանի Հանրապետության կառավարությունը ստացել է փոխառություն Ասիական զարգացման բանկից (ԱԶԲ) Քաղաքային կայուն զարգացման ներդրումային ծրագիր-Ծրագիր 2-ի ֆինանսավորման նպատակով: Սույն Ծրագիրը երևան է եկել Հայաստանի Հանրապետության կառավարության և Երևանի քաղաքապետարանի (ԵՔ) կողմից ԱԶԲ-ին ներկայացված դիմում-խնդրանքի արդյունքում՝ ենթակառուցվածքների բարելավման մի ռազմավարական պլանի մշակման նպատակով, որ Երևանը և այլ երկրորդական նշանակության քաղաքները կվերափոխի ավելի հարմարավետ քաղաքների: ԵՔ-ն հանդիսանում է իրականացնող գործակալությունը և գործում է որպես ներդրումային ծրագրի առաջին տրանշի Գործատու:

2. Երևանի քաղաքապետարանի “Երևանի կառուցապատման ներդրումային ծրագրերի իրականացման գրասենյակ” ՀՈԱԿ-ին անհրաժեշտ է խորհրդատու, ով կիրականացնի Դավթաշեն-Աշտարակ և Բաբաջանյան-Աշտարակ ճանապարհահատվածների շինարարության վերահսկողության ծառայությունները:

3. Գնումներին առնչվող տեղեկատվություն.

Ընտրության մեթոդը՝	QCBS
Պայմանագրի տեսակը՝	Միանվագ վճարումով
Հանձնարարականի տևողությունը՝	30 ամիս
Կարճ ցուցակի կազմման նախնական ամսաթիվը՝	Հուլիս, 2016թ.
Մեկնարկի նախնական ամսաթիվ՝	Դեկտեմբեր, 2016թ.
Ավարտման ենթադրյալ ամսաթիվ՝	Հուլիս, 2019թ.
Գնահատված բյուջե՝	\$2,700,000

Խորհրդատուների տեսակները՝ Խորհրդատուն պետք է ունենա ճանապարհի/մայրուղու/կամուրջի նախագծման շինարարական վերահսկողության, շինարարական մասնագրերի, որակի վերահսկման, պայմանագրի կառավարման և վեճերի լուծման լայնածավալ փորձ միջազգային նմանաձևավալ պայմանագրերի շրջանակներում: Առաջարկ ներկայացնող ղեկավար ընկերությունը կարող է հանդես գալ առանձին կամ որպես ասոցիացիա/կոնսորցիում կամ համատեղ ձեռնարկություն մեկ կամ մի քանի միջազգային կամ տեղական ընկերությունների հետ տեխնիկական և ծրագրերի իրականացման փորձի վերաբերյալ սահմանված գրառմամբ: Ընկերությունից/ասոցիացիայից/ՀԶ-ից պահանջվում է ներկայացնել ամբողջական տեխնիկական առաջարկ, որ կգնահատվի որակի և գնի վրա հիմնված ընտրության մեթոդի (QCBS) համաձայն՝ նկարագրված ԱԶԲ-ի *Խորհրդատուների օգտագործման ուղեցույցում* (մարտ, 2013թ., որը ենթարկվում է փոփոխության ժամանակ առ ժամանակ): Կկիրառվի 90% որակի և 10% գնի կշիռների համակարգ:

4. ՀՀՆՀ-ի ներկայացում

Խնդրում ենք ներբեռնել "word" փաստաթուղթը հետևելով այս հղմանը՝ <http://www.adb.org/sites/default/files/page/83267/eoi-consulting-firms-20131114.doc> և լրացնել այն ու ներկայացնել ներքոնշյալ հասցեով: Հետաքրքրության հայտերի ներկայացման հրավերը (ՀՀՆՀ) պետք է ներառի մանրամասն տեղեկատվություն Խորհրդատուի կազմակերպական կարողությունների, փորձի, նախկին կատարողականների վերաբերյալ՝ զարգացած և զարգացող երկրներում իրականացված ծրագրերում, ակնհայտ իրազեկվածություն տարածաշրջանում (Հայաստան, Կովկասյան և/կամ այլ ԱՊՀ երկրներ) աշխատելու մարտահրավերներից, ինչպես նաև կարող է ներառել երաշխավորագրեր նախկին պատվիրատուներից: Հանձնարարականի տեխնիկական առաջադրանքների (SU) նախագիծը էլեկտրոնային տարբերակով հասանելի է ԱԶԲ Բիզնես Հնարավորությունների վեբ-կայքում, ինչպես նաև այն կարել է ձեռք բերել ներքոնշյալ հասցեից: SU-ը կարող է թարմացվել և փոփոխվել առաջարկների ներակայացման փուլում, ըստ անհրաժեշտության:

Հետաքրքրության հայտերի ներկայացման հրավերը պետք է ներառի ՀՀՆՀ-ի մեկ բնօրինակ և երեք պատճեն և պետք է ներկայացվի կնքված ծրարով ընկերության անունով և հասցեով և նշագրված լինի "CBS-CS-10- SUDIP-2: Construction Supervision of the of two Road Links": ՀՀՆՀ-ն պետք է ներկայացվի ոչ ուշ քան 2016 թ. հունիսի 6-ին ժամը 17:00 հետևյալ հասցեով՝

Գնումների մասնագետ պարոն Արման Պետրոսյանին

“Երևանի կառուցապատման ներդրումային ծրագրերի իրականացման գրասենյակ”

ՀՈԱԿ

Երևանի քաղաքապետարան, Երևան 0010

Բուզանդի 1/3, 5-րդ հարկ, 511 սենյակ

Ի լրումն, ՀՀՆՀ-ի էլեկտրոնային տարբերակները պետք է ուղարկվեն arman.petrosyan@yerevan.am էլեկտրոնային հասցեին, սակայն այս էլեկտրոնային տարբերակները չեն համարվելու ՀՀՆՀ-ի պաշտոնական ներկայացում: Միայն սպագրված տարբերակները ստացված մինչև սահմանված ժամկետը՝ կցված լրացուցիչ էլեկտրոնային ֆայլերով (սկավառակով), պատշաճ կերպով կգնահատվեն: